ԱՆԳԼԻԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՎԱՔԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Անգլիկան Խորհրդակցական Կոմիտեի հրավերով սույն թվականի հոկտեմբերի 7—11 օրերին Անգլիայի Ս. Ալբանս քաղաքում գումարվեց Անգլիկան և Արևելյան ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչների հավաքը: Հավաքին մասնակցում էին Անգլիկան Եկեղեցին ներկայացնող 13 և Արևելյան ուղղափառ Եկեղեցիները ներկայացնող 7 բարձրաստիճան հոգևորականներ: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից հավաքին իր մասնակցությունը բերեց նաև Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատյանը:

Այս հավաքը արդյունքն էր Անգլիկան և Արևելյան ուղղափառ Եկեղեցիների այն ներկայացուցիչների հանդիպմանը, որոնք ներկա էին ԵՀԽ-ի Վանկուվերի 1982 թվականի Համագումարին: հավաքի նպատակն էր հնարավորություններ փնտրել՝ ուժեղացնելու համար փոխհարաբերությունները և հիմնավորելու փոխըմբռնումը վույգ Եկեղեցիների միջև:

Բարեկամական և անկեղծ մթնոլորտում եռօրյա խոսակցություններ տեղի ունեցան վանական հարցերի շուրջ և ի մասնավորի քննարկվեցին գործակցության հնարավորություններ հետևյալ ասպարեզներում.

ա. Աստվածաբանության ուսումնառության համար նախատեսվող կրթաթոշակներ.

բ. Հովվական գործակցություն տարբեր շրջաններում.

գ. Աստվածաբանական խոսակցությունների շարունակում:

Խորհրդակցության ընթացքում եղան մի շարք առաջարկություններ, որոնց շուրջ գոյացավ լիակատար համաձայնություն մասնակիցների միջև:

1. Թելադրվեց, որ աստվածաբանական բարձրագույն ուսման համար նախատեսվող կրթաթոշակները տրվեն առավելաբար այն ուսանողներին, որոնք ավարտել են իրենց հիմնական կրթությունը իրենց կրթարաններում: Շեշտվեց նաև, որ Անգլիկան ուսանողները ևս քաջալերվեն լրացուցիչ կարգով շարունակելու իրենց ուսումը Արևելյան ուղղափառ աստվածաբանական դպրոցներում ու վանքերում՝ հովվական գործի անցնելուց առաջ:

2. Նախատեսվում է Արևելյան ուղղափառ Եկեղեցիների աստվածաբանական դպրոցներին հատկացնել նպաստներ, հատկապես գրադարանների կառուցման, նոր գրքերի առաքման և կրոնա-գիտական պարբերականների բաժանորդագրության համար:

3. Ավելի կանոնավոր կերպով փոխանակում կատարել երկու հարանվանությանց կողմից տպագրվող թերթերի և պարբերականների:

4. Խորհրդակցությունը հատկապես շեշտեց շրջանային համակարգող մարմիններ կազմելու անհրաժեշտությունը՝ հասկացողության հասնելու և գործակցության գետին ստեղծելու համար երկու հարանվանությանց Եկեղեցիների միջև ԱՄՆ-ում, Կանադայում, Մերձավոր Արևելքում, Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, Անգլիայում և այլուր: Երկու կողմերի կրոնական պետերը իրենց շրջանային հոգևոր իշխանությանց պետք է հրահանգեն, որ այս կապակցությամբ որոշ քայլեր առնվեն:

5. Հովվական ասպարեզում համագործակցության հարցի մասին երեք տարբեր վիճակներ նկատի առնվեցին. (ա), մեծ քաղաքներ, ինչպես Լոնդոն կամ Նյու Յորք, ուր բավականին թվով ուղղափառներ կան և որտեղ կարելի է հիմնել անկախ Արևելյան ուղղափառ հովվություններ պատասխանատու հոգևոր սպասավորներով: (բ), միջին մեծության քաղաքներ, ուր քիչ թվով Արևելյան ուղղափառ հավատացյալներ կան, ո-

ՍՍՀՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ. ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՁԱԽԻՑ
ԱՌԱՋԻՆԸ՝ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՁԱՊԱԼՅԱՆ

ռոնք Եկեղեցի ունենալու հնարավորություն կամ ծառայող չունեն: (գ), առանձնացյալ Արևելյան ուղղափառներ այլ և այլ տեղերում: Առաջին վիճակում Անգլիկանները կարող են օգնել Արևելյան ուղղափառ Եկեղեցիներին՝ գտնելու պաշտամունքի մի վայր և հոգևորական. նույնը նաև Անգլիկանների պարագայում: Կարելի է ստեղծել նաև վանական Արևելյան ուղղափառ Եկեղեցիներից կազմված տեղական խորհուրդներ՝ փոխադարձ օգնության և գործակցության համար: Երկրորդ վիճակում օգնություն կարելի է ցույց տալ Արևելյան ուղղափառ խմբերին հոգևոր հովվի կամ նրան փոխարինողի հսկողության տակ հանդիպումներ ունենալու՝ աղոթքի և կրոնական մխիթարության համար. նույնը փոխադարձաբար Անգլիկանների պարագայում: Երրորդ վիճակում ընտանիքների և հոգևոր հովիվների միջոցով կապ հաստատել որևէ հարանվանության պատկանող առանձին անձանց հետ:

Նկատի առնվեց նաև այն հանգամանքը, որ երկու կողմերի ի հաղորդության չլինելու պատճառով կարող է դժվարություն ստեղծվել հովվական գործակցության ընթացքում:

6. Առաջարկվեց, որ հետազոտության նպատակով մի հանձնախումբ կազմվի՝ փնտրելու համար հնարավորություններ՝

(Ա) միասնական մի աստվածաբանական հանձնաժողով ստեղծելու և քննարկելու դրա իրականացման համար անհրաժեշտ եղող ֆինանսական հնարավորությունները, ինչպես նաև որոշելու այդ հանձնաժողովի նպատակներն ու կարևոր խնդիրները:

(Բ) Որոնելու միջոցներ, որոնցով կարելի լինի աստվածաբանական խոսակցություններ նախապատրաստել տարբեր աստիճանների վրա ու փոքր խմբերով, շրջանային հանդիպումներով:

7. Առաջարկվեց գիտնականների մի խմբի խնդրել, որ պատրաստեն Արևելյան ուղղափառ Եկեղեցիների, ինչպես նաև Անգլիկան տարբեր Եկեղեցիների հրատարակությանց մասին մի հատուկ մատենագիտություն:

8. Ժողովը նաև անդրադարձավ հատուկ մի գրասենյակ և որոշ դրամագլուխ ունենալու անհրաժեշտությանը, որպեսզի վերոհիշյալ առաջարկությունները կարելի լինի իրագործել:

Հանդիպման ավարտին հավաքի մասնակիցները մեկնեցին Քենթրբերի՝ ներկա լինելու երեկոյան ժամերգությանը, որտեղ Քենթրբերիի Արքեպիսկոպոսը հանդես եկավ բարիգալստյան խոսքով: Ապա Անգլիկան և Արևելյան ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները հրավիրվեցին Նորին Գերաշնորհություն Քենթրբերիի Արքեպիսկոպոսի բնակարանը՝ ընթրիքի:

Վերջին օրը ժողովը սկսվեց Ս. Ալբանսի տաճարում՝ անգլիացի համանուն առաջին քրիստոնյա նահատակի խորանի առջև, Արևելյան ուղղափառ Եկեղեցիների միատեղ մատուցած պատարագով:

Ժողովի ավարտին պատգամավորները համատեղ խմբագրեցին մի նամակ՝ ուղղյալ մասնակից Եկեղեցիների պետերին: Նամակում ասվում է.

«Աշխարհի քրիստոնյա Եկեղեցիները հատուկ հովվական պատասխանատվություն ունեն փոքրաթիվ քրիստոնյա համայնքների գործունեության տևականացման համար Թուրքիայի այն մասերում, ուր Աստված նրանց տեղադրել էր վաղ ժամանակներից»:

Իբրև մաս և բաժին այդ պատասխանատվության, ժողովը առաջարկում է հետևյալները՝

ա. Քաջալերել այդ քրիստոնյա Եկեղեցիներին տրվող այցելությունները համայն քրիստոնյա Եկեղեցիների ներկայացուցիչների կողմից:

բ. Պատրաստել և տարածել հանրամատչելի մի գրքույկ՝ քրիստոնյա աշխարհին ծանոթացնելու համար այդ Եկեղեցիների պատմությունն ու ներկա վիճակը:

գ. Պատրաստել և տարածել լսողա-տեսողական նյութեր այդ Եկեղեցիների մասին:

դ. Բծախնդրությամբ պատրաստել տվյալներ այդ Եկեղեցիների մասին և հրատարակել դրանք եկեղեցական հրատարակչությունների կողմից:

ե. Տևաբար աղոթել այդ Եկեղեցիների համար՝ դրանով ամրացնելու համար քրիստոնեական միասնականությունը նրանց հետ:

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆ